


Այդ պարբերականին առաջին թիւերը ձեռք առնողներն, գրեթէ քառասուն տարիներէ ետքը, անշուշտ շատ թերակատար պիտի գտնեն զանոնք, մանաւանդ արուեստագիտական տեսակիտով. իսկ այսօրուան թերթերն ակնարկած ատեն՝ պիտի տեսնեն թէ ամենայն ձեռնարկ, մանաւանդ մեզ նման ազգի մէջ, միշտ պզտիկէն կ'առնուն իրենց սկզբնաւորութիւնը, ինչպէս եւ բնութեան աւմէն արտագրութիւնք. և թէ ժամանակն ու ջանքն են՝ որ իրարու ձեռք ձեռքի տուած կը գործեն ամեն յառաջդիմութիւն:

Նոյն վախճանաւ հաստատեց հայրապետն իր անունը կրող մեծ վարժարանն յ'Էջմիածին, ուստի ամբոստ ամէ կ'ընծայուն ազգին գիտուն հոգեւորականութիւն և աշխարհիկ ուսուցիչք, կրթիչք և դատտիրարակը ազգին ապագայ սերնդեան:

Իր յաջորդն Մակար Ա ի հիմանց փառաւոր տպարան, ձուլարան և այլ կարևոր պարագայքն կառոյց և հոգաց, ազգասէր և բարերար անձանց դրամական օժանդակութեամբ, որոց անուան փառքն՝ գործոյն օգտակարութեանը մէջ է, և երախտապարտ ազգին շնորհակալութիւն՝ յաւերժական արձան յիշատակի:

Իսկ արդի հայրապետն, անուամբն և սրբութիւ ստուգիւ Հայր իր հոգեւոր խնամոցը յանձնուած սիրելի ժողովրդեան, հայրապետութեան առաջին օրերէն՝ ընտիր ամենազգի տառեր ստացաւ ի Մխիթարեանց վիճէնայի, և նոր կերպարանք մը տուաւ թէ Արարատ լրագրին և թէ ուրիշ տպագրեալ գրոց, օգտակարը ջանալով միաբանել ընդ գեղեցիկն և ճաշակաւորին:

Շարայարեկի



Պ Ա Տ Կ Ե Ր Ո Ւ Ս Ո Յ Ց Գ Ի Ր Ք

(Տես յ'էջ 385)



83. Այս երեսիս վրայ պատկերքն գունաւորեալ են զեղնակարմիր, բայց քիչ շատ մալած. յաջկողմն՝ տասն կամ աւելի անձանց խումբ մի կայ, որոց շատին միայն գլուխը գծագրեալ մօրուաւոր կամ անմօրուա են. երկու կամ երեքն միայն ամբողջ և գունաւոր. ասանց գիմաց միւս երեսին եղբրքին՝ գունաւոր մէկ մի, որոյ ձեռաց ինչ դիրք ունենալն յոյսնի չէ: Այս երկու եղբրաց մէջ անձ մ'այլ կայ շատ նշանաւոր դիրքով. պատմունանին ստորոտն կ'երեւի ճերմակ փնացած, վերարկուն նեղ և երկայն մէկ թեւէն կախուած. գլուխը սեւցուցեր են, վիզը ծռած, թեւերն այլ գիւնէ վեր այնպիսի կերպով բարձրացուցած, որ յուսահատութիւն և ողբալ երեւցնէ. միթէ Երեմիամարգարէ: Պատկերիս վերեւն այլ երկու մեծ գլուխը կան սեւանկարը, մին մօրուօք, միւսն՝ կլորակ անմօրուա, բաւական ազդեցիկ. (թիւ 25):

84. Նշանաւոր է և այս պատկերս, որ ներկայացնէ Խարայեացոց յանապատին նուազիւն ծարաւով. Մովսէս կապոյտ կանաչ զգեստուք և դեղին լօղկաւ կ'երկնցընէ զգաւազանը ի վէմն, որ քննուած է. ի ձախ կողմն երկայնամօրուա աղաչաւոր մի կայ, դեղին վերարկուաւ. յաջկողմն այլ կէս դեղնազոյն և այլ անգոյն ծարախք՝ աղաչաւոր ձեռօք. վարն այլ ութ նոյնպիսիք, յորոց մին կանաչ գունաւորած է, փոքր մօրուօք, և նայի դէպ ի Մովսէս, ի գիրկն առած կիսանուաղ աղջկը կամ տղայն. Երեսին մէկ անկիւնում՝ այլ մեծկակ թեւի գծանկար մի կայ:

85. Այս պատկերս այլ նշանաւոր է. մէկ կողմում կան տասնիւ չափ զլուխը արանց և կանանց, որոց գիմաց չորս ամբողջ կան. գունն կերպարանք՝ պէսպէս գունաւորեալք. ասոնք այլ աղաչաւոր թուին առ կարմրագեւատ մէկ մի՝ որ կեցած է ի միւս կողմը, և ա.

նոնց դարձած՝ լուսապսակ գլխովն. ձախ ձեռքը վերուցած ցուցընէ բան մի, յալում՝ Թուի նեղ գաւազան։ Երեսին պարապ մասին վրայ յետոյ մէկն հարեւանցի և անարուեստ գլուխ մի գծագրած է, թերեւս նշանակելով վերեւը գրած երկու տողերը։

« Խաբեցա ի տես պատկերին դէմ ի գականին, Եւ կապեալ գերեցա ես տոռամբ նորին »։

86. Գունաւոր և նշանաւոր է և այս. վերեւ յալակողմն Դաշիթ՝ քնար ի ձեռին՝ բազմած. դիմացն դեղնազգեստ ծնրադիր ոմն, որոյ առաջին լրատայքն գրուած է, քովն այլ ուրիշ մի կանդուն կեցած. բայց առաջինն



Թիւ 28.

Թուի Ուռնա. վասն զի ներքեւն նկարած է կայն. փոխանակ այս բառիս գրուած է յարն է, բայց ոչ հին. աւելի հին երեւի քովի կարմրագիրն՝ Եղքն են, զի երկու սեւականաչ եղինք կան ի քառակուսի ոտքով արկղի նման շինուածի մէջ, զոր շրջապատէ մեծ դեղնա-նազոյն բոլորակ մի։

87. Ասկէ առջինին պատշաճի այս երեսս այլ, զի ներկայացընէ Տապանակին փոխադրու թիւնը, զոր յայտնէ և գիրն՝ Տապանակն է. Կառքն է. սայլափար Հօտաղն նստած է, երկուք այլ գիմացէն կ'երթան. անոնց առջեւն վայելչադէմ մօրուանի ծեր մի կապոյտ և

գեղին գոյնեցող զգեստաւորած. աւելի առաջ՝ կապոյտ, կանաչ և դեղին հագած Դաւիթ, քնար ի ձեռին և ոտքն ի կաքաւ, դէմքն այլ գունաւորեալ. բայց խանգարած է։

88. Երայի մարգարէն. որոյ միայն գլուխն կ'երեւնայ, վասն զի կու ողոցեն զայն, մարմինը մեքենայի մէջ ծածկած, մեծ քառակուսի շրջանակաւ սղոցով, երկու դահիճք, լուս գծագրեալ. Մանասէ թագաւորն կարմրախառն դգեստով՝ կանաչով բարձր ծածկած աթոռի վրայ նստած, իր անգըթու թեան գունը կու դիտէ. բայց դէմքն գրեթէ բոլորովին մաշած է։

89. Մեծ բերանաբաց կէտ ձուկն, կապոյտ գունով, կարմիր գծերով. բայց բերնի եւ դածն յետոյ անարուեստ ծրագիր մ'է. դիմացը հինկեկ կարմրով գրած է Յռնան է։ Կայ մէկ անկեան մէջ գծագրեալ Յովնան մ'այլ, ձեռն ի ծնօտի՝ մտածելով. գլուխն վերէն սեւագծելով այլայլած է։ Ուրիշ յետոյ գծագրեալ անարուեստ ինչ այլ կայ։

90. Այս երեսիս ձախակողմը բռնէ երկայն պէտպէս բազմամանուած զարդ մի. յալակողմն՝ վերեւը գրուածն նշանակէ՝ Գոտեւ մարտն Յակոբայ. գիրար գրկած երկու անձինք լուսապսակը, մէկուն մէջ խաչի նշմար կայ, որով գ'Բրիստոս նշանակել տայ Հեղիւնակն։

91. Քառակերպեան աթոռի վրայ բազմած Փրկչին, բիւզանդական կերպով, ալոյն օրհնէ. ի ձախում՝ փղբ ծրար. զգեստը ներկեր են ի կապոյտ, լուսապսակին խաչաթեւքն ի կարմիր։ Ներքեւ՝ հակառակ գիրքով և նորազոյն գրաւ. որ Թուի գհինն այլայլած, կապոյտազգեստ թեւերը տարածած՝ փախչելու գիրքով մէկ մի, զոր հնաձեւ գիրն յայտնէ՝ Երմիա։

92. Թուի ի վերնատան տաճարի կանգնած քահանայապետ մի, որ կ'օրհնէ դիմացի երեսը սեւազուցած ծերունին, որ ունի ի գրկին մանուկ մի, որոյ նրբագիծ դէմքն աղջկան թուին. քահանայապետն կարմիր հագած է, քովը ուրիշ մի կանաչազգեստ, նոյնպէս մօրուանի։

93. Նման առաջինոյն. քահանայապետն տաճարի միջում է, դիմացը՝ թուին աւելի Յովակիմ և Սննա քան Յովսէփ և Մարիամ, որք կ'ընծայեն դաժնուկ մի. մասամբ գունաւորեալ է պատկերս։

94. Կարմրազգեստ երկայնամօրուս և յետոյ գունաւորեալ քահանայապետ, կ'օրհնէ ձեռաց տակ կանգնած կոյսը, վայելչապէս գծագրեալ և գունաւորեալ կապոյտ կանաչ զգեստուք. իսկ փեռային միայն գլուխն գունաւորեալ է. չորս այլ նրբագիծ և վայելուչ

անձինք կան. մէկն՝ որ ամբողջ գծագրուած է՝ զարմացական ձեռք վերուցեր է:

95. Տիրամօրն և Եղիաթաթի ռոյազու-
րանքն, բարակ գծագրութեամբ, անուշտ
յլակետարանէ մի ընդօրինակուած:

96. Երեսին վարի կողմն ցուցնէ զՅովսէփ
ի քուն, առ որ գայ հրեշտակն (գունաւո-
րեալ) յայտնել Մարեմայ յղութեան պան-
շիկը: Իսկ ի վերեւն թուի Յովսէփայ մը-
տածելն արձակել զնա: Սա որ թուի ի դէմն
կանդնած և բազկունքը հրաժարական ձեռով
կանգնած, կիսամաշ գիմօք չերեւիր կոյս մի.
զլիսապատն և վերարկուն՝ կապոյտ ներս
կած են:

97. Այս երեսիս մէջ այլեւայլ մասամբ
ճարտարապէս բովանդակուած են՝ Քրիստոս
ծնեալ և եղեալ ի մարի, Տիրամայրն կռթը-
նած յանկողնի. Աստղն ճառագայթած և վե-
րեւ՝ հրեշտակն աւետարար և այլ հրեշտակք.
Հովիւքն, ներքեւ՝ երեք Մօգքն, զորս կ'ըն-
դունի Յովսէփ:

98. Քրիստոսի քառասնօրեայ գալուստն
կամ բերումն ի տաճարն. պատկերն ներս
կայացնէ Սիմէոն ծերունոյ զարբնելն ըզ-
Յիսուս՝ առ մայրն, որ կարմիր և կապոյտ
հագած է. ետեւը կանգնի Ս. Յովսէփ. եր-
կուքին միջոց նոյնպէս լուսապսակ կին մի,
թերեւս Աննա մարգարէուհին, բայց չէ պա-
ռաւ:

99. Այս երեսին մէջ տեղը գրաւողն ա-
ղիսապոյն վայելչածն էն է, վրայինն ոչ է
հեծած՝ այլ նստած, և ի հակառակ կողմ
դարձած. դէմքն խանգարած ըլլալով չի
փարատեր մեր տարակոյտը, թէ արդեօք
սրբազան և գերազոյն Անձին է որ յԵ-
րուսաղէմ կու մտնէ. նոյնպէս ձեռաց դիրքն
այլ, մէկն դէպ առաջ կարկառած, միան
ծընկին ներքեւ. զգեստներն կարմիր. Քո-
վընտի՝ երկար տաճարի մի բարակ սիւնե-
րով պատ կ'երեւի. որուն դուռը կու բաղիւ-
կարմրագոյն և բոկոտն քակարոնդ պա-
տանի մի. դիմացի կողմն (որ է իշուզ գա-
ւակին և նստողին դէմքին), ժայռերու նման
կապոյտ բարձրութիւն կայ՝ որ կարծես թէ
տաճարին ճակատը խափանէ. և անոր վրայ
եննը ուղղով կարծուի մէկ աղայակերպ մի
ի խաչանի լուսապսակաւ, որչափ նշմարեմ.
սա հեծած է յ'ուս Հասակաւոր մարդու մի,
երկու ձեռքերն երկընցուցած, որպէս թէ
ժայռը կ'ուզէ բռնել, կամ աչքերն կոյր են.
միթէ Երեմովի՞ կոյրն:

100. Մկրտութիւն Քրիստոսի, չոր երկայն
Հասակաւ, ճակտին վրայ Յովհաննու ձեռքն,
զլիսուն վերեւ աղանակերպ Ս. Հոգին. եւ
տեւը՝ Հինգ հրեշտակք՝ որ մկրտողին սըր-

բուելիք կու բերեն. Յիսուս՝ ժայռի մի վրայ
կեցած է, և կոխէ զգլուխ զայն պատող վե-
շապին. անոր մօտ այլ սատանայն պիտի ըլ-
լայ, բայց ինչ ձեռով է՝ չորոշուիր:

101. Կարմիր վերարկու մի վրան առած
մինակուկ կեցած է Յիսուս, յանապատի.
դիմացը՝ փորձին ձեռք երկընցուցած խօսի.
վերը՝ ճակակաւոր ոտքով նոյնն կամ ուրիշ փոր.
ձի մի՝ քար մի նստած է, իբր ըսելով առ
Յիսուս, Ասա՝ զի Հաց լինիցի այն քարն:
Ասոր դիմաց պարապ թողուած է եղեր, ուր
յետոյ մէկն Յիսուս մի ձեւացուցեր է անա-
րուեստ: Պատկերին մէկ անկիւնը՝ Քրիս-
տոսի ոտից մօտ երկու կկիւծած խաղանման
կենդանիք գծուած են:

102. Այս երեսի վրայ այլ նկարուած է
վերոյգրեալ փորձանքն. Յիսուս շուրջափ
նման կարմիր լօգիկ մի առած ի վրայն, մէկ
ձեռքով անոր փշերը բռնէ, միւսով՝ պրա-
կելի մի. դիմացը շատ մի քարեր թափած է,
աղայաւորի կերպով կեցած թասի ձեռով
զլիսանցով և կոկ Հագուած մարուանի սա-
տանայն, որոյ ոտից կեռիքն և լեզուարձակ
օձակերպ ցցուած ագին՝ յայտնեն ինչ խա-
տառակ յարեալ Հինաւուրց ըլլալը: Այս
տեղ այլ Յիսուսի ոտից քով շնակերպ կեն-
դանի մի կայ նստած:

Երեսին վարի կողմն ուրիշ տեսարան մի
կայ՝ բաւական նուրբ գծած. առաքելոց նա-
ւակոծին է. Պետրոսի ի վերայ ալեաց եր-
թալն և վարիցած ատեն Յիսուսի բռնելն
զնա:


103. Հարսանիքն Կանայ. սեղանի վրայ
շատ հաց, քանի մի բաժակք. բազմականք
չեն երեւիր, այլ միայն Յիսուս ի միջի, Տի-
րամայրն աղայաւոր ի քովն, միւս կողմն այլ
փաթթոցաւոր կանաչազգեստ մէկ մի, զուցէ
տաճարապետն կամ փեսայն. Տիրամօր կող-
մէն այլ գոնէ մի կէս դուրս ելած ծառայ
մի, վառած ճրպէ ի ձեռքն. վարի կողմն այլ
նկարագծուած են վեց Թակոյկքն, որոց մէ-
կուն մէջ լուր լեցնէ ոմն, միւս ոմն այլ բռնէ
զթակոյկն:

104. Այլակերպութիւն Տիառն՝ Մովսէս
և Եղիա՝ յալմէ և յահելէ. թմրած աշա-
կերտքն ի ստորոտ լերինն:

105. Գաղարու յարութիւնն, ինչպէս սո-
վորաբար՝ նկարուի յաւետարանաւ. առ ոտս
Յիսուսի մինակ մէկ քոյրն կայ՝ պաղնեղով:

106. Յիսուսի մուտքն յԵրուսաղէմ. այս
տեղ այլ նստած է նա՝ իշուն վրայ, բայց քո-
վընտի. գունաւորեալ անձինք կան շուրջը,
բայց շատ մալուած, մանաւանդ դէմքերն:

107. Յետին ընթրիքն. Հինգ վեց անձ մի-
այն կ'երեւին. մէկ անմօրուս մի բարձր. տեղ



Ἰ. 26, 27.

նստողի (որոյ դէմքն խանգարած է) գրկել կարծուի, անշուշտ Յովհաննէս՝ « որ անկաւ զլանջօքն Յիսուսի » :

108. Ոսկերայն. Առաքելոց ոմանք զուստուրած ըլլալով, դէմքերնին՝ որ բաւական բարակ զծագրուած են՝ խանգարուեր են. Յիսուսն կանաչադգեստ, չափազանց նեղ և երկայն :

109. Յուդայի մատնութիւնն, Քրիստոսի (որոյ դէմքն խանգարուած է ներկով) ըմբռնումն: Այս պատկերին զծագրութեան ոճն և դէմքերն կու տարբերին յայլոց. թուի յեւրոպական գրոց առնուած :

110. Խաչելութիւն. Յիսուս և խաչն կարմիր ներկած են, միայն Քրիստոսի գոգնոցն կանաչ. նոյնպէս գունաւորեալ Տիրամայրն, որոյ քով գրուած է իր զգեստուց գունոց նկատմամբ. խաչին միւս կողմը կեցող և լացողն կանաչադգեստ, կի՛ն է թէ Յովհ. Աւետարանիչ :

111. Թաղումն Քրիստոսի. գունաւորելով խանգարուած է պատկերն. անձանց մէկուն անունն գրուած է Նիկողոյ-մոս :

112. Նոյնպէս ներկելով խանգարուած է այս պատկերս այլ, որ է Քրիստոսի էջնէ դժոխս. քարայրի մէջ կեցած է իրրեւ գե-

տին չկոխելով, Առամայ ձեռքէն բռնած՝ ազատելու: Գունոց խառնակութեան միջէն կ'երեւին նրբագիծ դէմքեր :

113. Պարապ թողուած է այս երեսս. յետոյ մէկն անշնորհք մարդաձեւ մի գծեր է :


114. Կարմրագիծ Աւետումն. Գարբիէլ ցուցինէ առ Կոյսն զՍուրբ Հոգին, ի վերայ քո եկեցէ, ըսելով: Այս պատկերս այլ եւրոպական հնարք է, զգեստուց ծալքն շատ լաւ նկարած :

115. Չորս Աւետարանիչք իրենց նշանակներով. Մատթէոսի հրեշտակն՝ իրեն կլոր բան մի ներկայացընէ. Յովհաննու քով կայ և Պրոխորոն, երկուքին միոյն՝ արծիւն :

116. Պարապ թողուած :

117. Չորս կլորակք՝ կանաչ և կարմիր բազմամանուած զարդուք: Վերեւն՝ երկու կարմրագիծ կինդանիք, մէկն եղանման, բայց երկայնացողուկ. միւսոյն՝ միայն երկայն եղջիրները կ'երեւին և յայտնեն զայն :

118. Կանաչ ու կարմիր գոյներով երկայն տափակ զարդ մի, Թաշնովք, բարակ (որսի) շուներով և վիշապով ճարտարապէս բաղադրած: — Այս վերջին երեսին ներքեւ գրուած է Կեղոց խրատն (տես 290) :



Ք Ա Ր Մ Է Ն Ս Ի Լ Վ Ա

Գ Ե Ն Ա Ի Ա



Պարզեալ ձրգի ծով կապուտակ,
Տարածանի ափըն խաղաղ,
Հագիւ շրքեղ՝ մանրիկ ալեակք՝
Գլծեն նըշոյլ յաւազ ծանծաղ :

Հանգիլ քաղաքն սանդղակերո
Յաւիտեանց պեռն բազուկն աղաա,
Ծրփի ծածան ի վէտ ի վէտ,
Ապա ձրգի ջինջ և զըւարթ :

Եկեալ հասի խոնջ ապիկար
Ի փողփողուն փայլ իւր անդայր,
Ի մարտ ի ցաւ դգամ՝ զիս յօժար
Աւժարծ նորոգ կենաց ի բոյր :

Ըզփայլդ իբր հիւր թողեալ սակայն
Եկի շիրմին յափն այցելու.
Ազատ ի ջինջ լոյս անդ միայն
Լիցուք՝ այն եզր ի՛սկն անդորրու :

